Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ

ՀՏԴ 941 (479.25):325
ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)
Շ 973

Գիտաժողովը նվիրվում է
Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Արտակ Մաղալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝
Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, **Վլադիմիր Բաբխուդարյան** – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, **Բաբկեն Հարությունյան** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, **Աշոտ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, **Ռուբեն Սաֆրաստյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, **Աբրահամ Աղասյան** – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **Պավել Ավետիսյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՇՈՒՇԻԻ ԴԵՐԸ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

19-րդ դարի II կեսից աստիճանաբար վերելք է ապրում Շուշիի մշակութային կյանքը: 1836 թ. ցարական կառավարության կողմից պարտադրված հայ եկեղեցու կանոնադրության՝ «Положение»-ի համաձայն Ռուսական կայսրության հայաբնակ վայրերը բաժանվում էին վեց թեմի՝ իրենց հոգևոր առաջնորդներով և թեմական դպրոցներով: Դրանցից մեկը Ղարաբաղի թեմն էր, որի առաջնորդանիստ կենտրոնը դառնում է Շուշին: Այդ թեմի մեջ էին մտնում Շուշի, Նուխի, Լենքորան քաղաքները շրջակա 156 գյուղերով, 7167 ծուխ-ընտանիք հայ բնակչությամբ[1]: 1838 թ. Շուշիում բացվում է թեմական հոգևոր դպրոցը: Սկզբում սոսկ կրոնական առարկաներ դասավանդող դպրոցն աստիճանաբար անցնում է նաև բնագիտական առարկաների դասավանդման: Թեմական դպրոցի ծրագիրը մեծապես կախված էր հոգևոր առաջնորդի և Վեհափառ Հայրապետի կարգադրություններից: Դարի կեսից սկսվում է նոր հոսանքների՝ գաղափարների մուտքը Շուշի: Իբրև առևտրականների քաղաք՝ հարաբերություններ ունենալով ռուսական խոշոր կենտրոնների հետ՝ Շուշին դրսից ներգրավում է ընդունակ և երիտասարդ ուժեր, որոնց միջոցով նոր գաղափարներ էին թափանցում այնտեղ: Դեռևս Ներսես Աշտարակեցու ժամանակ բոլոր թեմական դպրոցներում նրա կողմից նշանակվեցին աշխարհական գործակալներ, որոնք հետագայում ընտրվում էին ժողովրդի քվեով: Հոգևորականների դեմ տարած աշխարհական հոգաբարձուների հաղթանակի շնորհիվ 1863 թ. Շուշիի թեմականի տեսուչն է դառնում Պետրոս Շանշյանը, ով, Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններում կրթություն ստանալով, դառնում է Փարիզի Սորբոնի համալսարանի ունկնդիր, իսկ 1849 թ. վերադառնում է Թիֆլիս և Ներսես Աշտարակեցու կողմից նշանակվում Ներսիսյան դպրոցի տեսուչ: Նրա տեսչության շրջանը տևեց մինչև 1857 թ. և պատմության մեջ մեծարվեց «Շանշեան դար» անունով: Լեոն այդ մասին գրում է. «Անհերքելի պատմական իրողութիւն է մնում, որ Շանշեանը հայ առաջադիմութեան ռահվիրաներից մեկն էր... համոզմունքի շիտակ զինվոր»: Շարունակելով Պ. Շանշյանի բնորոշումը՝ Լեոն դիպուկ ընդգծում է. «Ազգային ուժեղ ինքնագործունեութիւն եվրոպական լուսավորութեան առաջնորդութեամբ – ահա Շանշեանցի կառավարած դպրոցի նշանաբանը»[2]: Ներսեսի մահից հետո վիրահայոց հոգևոր առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանի եռանդուն ջանքերով և նրա արևմտահայ գործակից Տերոյենց Չամուռճյանի մատնությամբ Պ. Շանշյանը Թիֆլիսից հեռացավ Պետերբուրգ, իսկ տեղի հոգևոր առաջնորդը զեկուցում էր նորընտիր կաթողիկոս Մատթեոս Չուխաճյանին, որ հազիվ կարողացել է ցրել Շանշյանի աշակերտներին: Այդ դեպքերից 5 տարի անց «Շուշու հասարակութեան առաջադեմ մասը միտք յղացավ նոյն այդ Շանշեանի ձեռքը յանձնել Ղարաբաղի թեմական դպրոցը»[3]: Դա տեղի էր ունեցել 1863 թ. հոկտեմբերին թեմի նոր հոգևոր առաջնորդի խնդրանքով և կաթողիկոսի բարեհաճությամբ: Սակայն 1865 թ., երբ Ղարաբաղի թեմի հոգևոր առաջնորդը դարձավ նույն Սարգիս Ջալալյանցը, նրա միջամտությամբ Շանշյանը դարձյալ հեռացվեց այս անգամ Շուշիի թեմական դպրոցի տեսուչի պաշտոնից: Նրան հետևեցին բազմաթիվ տեսուչներ, հաճախ՝ արժանավոր մտավորականներ, երբեմն՝ անարժաններ: Նրանցից

[1] *Լեո*, Պատմութիւն Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 97:

[2] Նույն տեղում, էջ 283, 284:
[3] Նույն տեղում, էջ 286:

ամեն մեկը իր հետքն էր թողնում թեմականի պատմության վրա. Ղազարոս Աղայանը, Պերճ Պռոշյանը, Սեդրակ Մանդինյանը մեծ ջանքեր ներդրեցին թեմականը ժամանակի գաղափարներին հաղորդակից դարձնելու գործում: Մանդինյանի ժամանակ թեմականը հասնում է զարգացման բարձր աստիճանի: Նա հատուկ դասարան է բացում, որը պատրաստում է ուսուցիչներ տարրական դպրոցների համար: Նրա ջանքերով և գործուն մասնակցությամբ Շուշիում բացվում է հասարակական գրադարան, հրատարակվում են գրքեր, Սիմեոն Հախումյանի խմբագրությամբ՝ «Գործ» ամսագիրը:

Ուսուցիչների հոգատար ձեռքերի տակ թեմականում հասունանում է նոր ժամանակների շնչով լի, հայրենասիրական ոգով տոգորված մի նոր սերունդ՝ թեմականի 80-ականների աշակերտության սերուցքը: Ցարական կառավարությունն այդ գործընթացը կանխելու համար որոշակի քայլեր ձեռնարկեց: Վերահաս վտանգի մասին Մանդինյանը հայտնեց թեմականի հոգաբարձությանը: 1881 թ. մարտին նա տեղեկություն էր ստացել, որ իշխանությունները Շուշիում պետք է բացեն պետական արտոնություններով ապահովված ռեալական ուսումնարան: Նույն 1881 թ. սեպտեմբերին բացվեց ռեալական դպրոցը, որտեղ դասավանդումը տարվելու էր պետական պաշտոնական լեզվով՝ ռուսերենով: Մինչ այդ քաղաքի ունևորները իրենց զավակներին գրագիտության համար ընդունել էին տալիս թեմական դպրոց: Ռեալականի բացումից հետո կապվում են նրա հետ: Այնտեղ ուսուցումը տարվում էր ռուսերենով: Ռուսացման քաղաքականության առաջին քայլն էր դա, որին 1880-ականների երկրորդ կեսին հաջորդեց հայկական դպրոցները փակելու հրամանը: Նորընտիր կաթողիկոս Մակար Թեղուտցու ջանքերով 1886 թ. վերաբացվեցին հայկական դպրոցները, սակայն նրանց գործունեությունը սեղմված էր կաշկանդող զսպանակներով: Այդ ժամանակ էլ թեմականի տեսուչն է դառնում Լևոն Սարգսյանը՝ ՀՅԴ-ի հիմնադիրներից մեկը, որը հետագայում հեռացավ կուսակցությունից և նույնիսկ պայքար սկսեց այդ կուսակցության դեմ: Լևոն Սարգսյանի ջանքերով թեմականը բարձրացավ նոր աստիճանի, սակայն նրա գոյությունն ընթանում էր պայքարի հորձանուտում, աշակերտական բուռն ցույցերի, հոգևորականության դավերի, աշակերտությունը ցրելու, առաջադեմ ուսուցիչներին դպրոցից հեռացնելու միջոցառումներով: Այլ էր իրավիճակը ռեալականում. ուսումնական առաջին տարիներին թույլատրվեց հայերենի ուսուցում, մյուս բոլոր առարկաները դասավանդվում էին ռուսերեն: 1887–88 ուս. տարուց սկսած՝ հայոց լեզուն հանվեց դասավանդումից մինչև 1906 թ., երբ այն նորից դասավանդվեց, դրան միացան նաև հայոց պատմության դասերը[4]: Ըստ երևույթին այդ ռուսացման-ուծացման քաղաքականությունն էր պատճառը ռեալականի աշակերտության մեջ ընդգծված հակառուս, ավելի ճիշտ՝ հակացարական տրամադրությունների: Այդ հաստատության շրջանավարտների գերակշռող մասը, հոգու խորքում հավատարիմ մնալով հայկական քաղաքակրթությանը, դարձավ ժամանակին իշխող համամարդկային գաղափարների դավանող: Աշոտ Հովհաննիսյանը «Հուշեր անցյալից» հոդվածում Շուշին բնորոշում է իբրև «կովկասահայերի մտավորականության ինքնատիպ հանգույցներից մեկը»[5], որն անդրադարձնում էր Ռուսաստանում և Կովկասում գոյություն ունեցող ազգային, սոցիալական, նաև քաղաքական հակասությունները: Ներազգային հակասություններ էին զգացվում թեմականի և ռեալականի շուրջն ընթացող բանավեճերում և պայքարում: Սկզբում «Նոր դարի» և «Մշակի», որ ավելի ճիշտ կլիներ բնութագրել պահպանողականների և ազատականների, վիճաբանություններն ընթանում էին ազգային-ծխական հարցերի շուրջ, որոնք քողարկվում էին հոգևոր առաջնորդների և թեմական դպրոցի տեսուչի, նաև ուսուցչական կազմի միջև եղած տարակար-

---

[4] *Հ. Գրիգորյան, Գ. Հարությունյան*, Շուշիի ռեալականը, Ե., 2001, էջ 40–51:

[5] *Աշ. Հովհաննիսյան*, Հուշեր և բնութագրումներ, Ե., 1969, էջ 76:

ծությունններով: Տարբեր հոսանքներին պատկանող թեմականի ուսուցիչների հակասությունները փոխանցվում էին նաև աշակերտական կազմին: 1880-ականների կեսերից սկսած՝ Շուշիի երեք ուսումնական հաստատություններ որոշակի դեր էին խաղում ամբողջ Ղարաբաղի հասարակական կյանքում. առաջինը թեմական դպրոցն էր, երկրորդը՝ ռեալականը, երրորդը՝ քաղաքային դպրոցը: Վերջին երկուսը ռուսական դպրոցներ էին, իսկ առաջինը Արցախի թեմի հոգևոր դպրոցն էր: Չնայած հոգևոր անվանումին՝ նրա շրջանավարտների նույնիսկ ամենափոքր մասը չէր ընդունում հոգևորական կոչում. այդ դպրոցն արդեն ուներ տասնյակ տարիների ավանդույթներ, աչքի էր ընկնում համազգային ճանաչում ունեցող բազմաթիվ ուսուցիչներով, դրանց հետ հավասար, գուցե և առավել բարձր հռչակ ստացան նրա շրջանավարտները՝ հայ ազգային-ազատագրական պայքարի նվիրյալները: Այդ երեք դպրոցների շուրջն էր համախմբված մյուս դպրոցների աշակերտությունը: Այդ դպրոցների մեջ մեր ազգի համար մեծ նշանակություն ունեցավ թեմական դպրոցը, որի շուրջ XIX դարավերջին և XX դարասկզբին համախմբվել էր ողջ Ղարաբաղի «գործունեա, առաջաւոր երիտասարդութիւնը»[6] որը, ըստ Լեոյի, ազդարարում էր «Նոր ժամանակների սկիզբը»: Թեմականի և ռեալականի աշակերտներն ունեին իրենց խմորատիպ և ձեռագիր աշակերտական թերթերը, որոնք լույս էին տեսնում ամիսը մեկ անգամ: Ռեալական դպրոցի թերթը ռուսերեն էր, կրում էր «Искра» անունը: Այն խմբագրում էր Միքայել Շահգելդյանը: Թեմականն ուներ «Կոկոն» թերթը, որը խմբագրում էր Թուման Թումյանը: Թեմականի կրտսեր դասարանցիներն ունեին դարձյալ խմորատիպ «Ծիածան» թերթը, որը լույս էր տեսնում Արսեն Տերտերյանի, Նիկոլ Պողոսյանի, Սիմոն Նարինյանի համատեղ ջանքերով[7]: Դպրոցներում գործում էին նաև աշա-

[6] *Լեո*, նշվ. աշխ., էջ 182:

[7] Թվարկած անձանցից XX դարի կեսերը հասավ միայն ականավոր գրականագետ Արսեն Տերտերյանը, մյուսները՝ ազատագրական պայքարի նվիրյալներ, իրենց կյանքը զոհաբերեցին այդ պայքարում:

կերտական միություններ, որոնք իրենց անվանում էին «ինքնազարգացման խմբակներ»: Այդպիսի մի խմբակ էր ղեկավարում թեմականի աշակերտ Սարգիս Հովհաննիսյանը, որին քաղաքի ոստիկաններն առիթ էին փնտրում ձերբակալելու համար: Երբ թեմականի տեսուչ դարձավ Բենիկ վարդապետը, սկսեց դպրոցը մաքրել «անբարեհույս տարրերից» և 1899 թ. սկզբից դպրոցից հեռացրեց Սարգիս Հովհաննիսյանին, մի փոքր ուշ դարձյալ 12 «անբարեհույսների»: Սարգիսը՝ հետագայում Սերգեյ, ավելի ուշ՝ Արամ Մանուկյանը, կարողացավ ընդունվել Երևանի թեմական դպրոցը և 1901 թ. ավարտեց այն բարձր ցուցանիշներով: Երևանի թեմականի տեսուչն էր, ճիշտ է դարձյալ հոգևորական, բայց արտակարգ հայրենասեր մի անձնավորություն, դարձյալ ղարաբաղցի Գարեգին Հովսեփյանը՝ Սարդարապատի ճակատամարտի Ղևոնդ Երեցը: Միանգամայն համաձայն ենք ակադ. Հ. Սիմոնյանի հետ, որն իր արժեքավոր աշխատության մեջ XX դարասկիզբը բնութագրում է իբրև ղարաբաղցի հեղափոխականների ֆենոմենի շրջան[8]: Իսկ դարձյալ շուշեցի, այդ իրադարձությունների ականատես և մասնակից Աշոտ Հովհաննիսյանը ուշագրավ որակավորում է տալիս թեմական և ռեալական դպրոցների շրջանավարտներին: Թեմականի աշակերտները համարյա առանց բացառության դարձան ազգային-ազատագրական պայքարի ազատամարտիկներ: 19-րդ դարի 90-ականների վերջերից սկսած դեպի «Երկիր»՝ Արևմտյան Հայաստան մեկնող զինատար խմբերի անդամների մեծ մասը թեմականի շրջանավարտներն էին: Ռեալականի աշակերտների հայացքներն ուղղվեցին դեպի Հյուսիս. նրանց մեծ մասը դարձան ականավոր մարքսիստներ: Իհարկե, եղան նաև բացառություններ. ռեալականի աշակերտներից ոմանք՝ Միքայել Վարանդյանը և Մարգար Ժամհարյանը, սկզբում նաև Լևոն Աթաբեկյանը, որը հետագայում ընդունվեց սոցիալիստ-հեղափոխականների շարքերը,

[8] *Հ. Սիմոնյան*, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Ե., 2003, էջ 596:

դարձան ՀՅԴ անդամներ, դարձյալ իրենց կյանքը տարբեր ձևով նվիրեցին հայ ազատամարտին: Նոր կազմավորվող ազգային կուսակցությունների անդամների մեջ դարձյալ աչքի էին ընկնում դարաբաղցիները: Շուշիի երիտասարդությունը սկզբում գտնվում էր հնչակյան կուսակցության ազդեցության տակ: 1890-ական թվականներին երկիր մեկնեցին շուշեցի հնչակյաններ Գաբրիել Կաֆյանը, Բարսեղ Զաքարյանը և Մարտիկ Սարուխանյանը: Առաջինն զբաղվեց իր կուսակցության գաղափարական քարոզչությամբ, հնչակյան սկզբնական կազմակերպություններ ստեղծեց երկրում: Վերջին երկուսը քաջաբար զոհվեցին, Մարտիկ Սարուխանյանը մասնակցեց 1896 թ. Վանի ինքնապաշտպանությանը և արմենական Մկրտիչ Ավետիսյանի, դաշնակցական Պետոյի հետ ղեկավարելով մարտերը, զոհ գնացին Պարսկաստանի ճանապարհին: Դարասկզբին որպես ֆիդայիներ, ՀՅԴ-ի գաղափարախոսության քարոզիչներ Արևմտյան Հայաստան մեկնեցին շուշեցի երիտասարդներ Իսաջան Առաքելյանը, Թուման Թումյանը (Թորգոմ), Եգոր Առստամյանը (Մենակ), Նիկոլ Պողոսյանը (Վանա Իշխանը), Սերգեյ Հովհաննիսյանը (Արամ Մանուկյան): Նրանցից ամեն մեկի կյանքը ազատագրական պայքարի մի ոդիսական է: Նրանց մասին գրել են թե՛ հուշերի հեղինակներ, թե՛ պատմաբաններ: Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» յոթհատորյակի էջերը լի են այս անձնավորությունների սխրանքների նկարագրությամբ: Թեթևակի անդրադառնանք նրանց: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Թուման Թումյանի կյանքը: Շուշիի թեմականն ավարտելուց հետո ստացել է զինվորական կրթություն, արժանացել սպայական աստիճանի, բայց թողել է այն, անցել Կարս՝ զինատար խումբ կազմելու և երկիր մեկնելու համար: Կարսում նրան հաջողվում է իր շուրջը համախմբել փորձառու մարտիկների, որոնց մեջ էին ռուսական բանակի ենթասպաներ, զինվորներ, թվով 30 հոգի. խմբի անդամները հետագայում հռչակվեցին (Քեռի, Տուրբախ, Սեպուհ և ուրիշներ): Ռուբենի բնորոշմամբ նրանք «ամենքն ալ մեկ-մեկ պատմական

դեմքեր դարձան... աննշմար չանցան»: Թումյանն ընդունեց Թորգոմ անունը, իսկ իր խմբին տվեց «Մրրիկ» անվանումը: Այդ խումբը բարեհաջող հասավ Սասուն, և դրա մեջ մեծ ավանդ ուներ Մենակը (Եգոր Առստամյան):

Օնունդով Վարանդայի գավառից, Շուշիի թեմականն ավարտած Եգորը մեկնում է Կարս: Նա քաջ գիտակցում է, որ զինատար խմբերի հաջողությունը մեծ չափով կախված է ճանապարհի ճիշտ ընտրությունից: Երկիր անցնելու, Սասուն հասնելու 200–300 կմ ճանապարհն անցնելու համար պետք էր որոշել ուղին, հանգրվանները, թշնամու շարժումները: Անհրաժեշտ էր լավ ճանաչել տեղանքը: Մենակը ծպտված, գյուղացու կերպարանքով անցնում է Խնուսի և Բասենի շրջանները, մի քանի անգամ հասնում է Սասուն և դառնում է կատարյալ ուղեկցորդ՝ «վալադ»: Նրա տված ցուցումներով «Մրրիկ» խումբն անվնաս հասնում է Սասուն: Հրայրի պնդումով Թորգոմը մտնում է Սասնո հրամանատարական կազմի մեջ, բայց ՀՅԴ ընդհանուր ժողովին մասնակցելու համար թողնում է Երկիրը՝ կրկին վերադառնալու նպատակով: Մենակը շարունակում է ուղեկցորդի իր գործը Կարսից Բասեն, ապա Խնուս-Սասուն ուղիներով: Նևրուզի և Խանի խմբին օգնություն հասնելու ժամանակ նա զոհվում է:

Շուշիի թեմականի լավագույն աշակերտներից էր նաև Իսաջան Առաքելյանը, որը Կարս մեկնողներից առաջիններից էր: Դպրոցի շնորհաշատ աշակերտներից էր նա, ՀՅԴ-ին անդամագրվեց, կատարում էր բազմաթիվ պատասխանատու հանձնարարություններ: Սակայն նրա մեծ երազը Երկիր անցնելն էր: ՀՅԴ-ն նրան ուղարկում է Կարս՝ նախապատրաստվելու և Երկիր անցնելու համար: Այնտեղ մի խումբ ընկերներով (5 հոգի) ձեռնամուխ են լինում ռումբ պատրաստելու գործին: Երբ թվում էր, հաղթահարված են բոլոր դժվարությունները, ռումբերը պայթում են. հինգ ընկերներն էլ զոհվում են: Ճիշտ դիտողություն է անում Ռուբենը. «Ասիկա թող դաս

լինի, որ կամքեն, բաղձանքեն ավելի անհրաժեշտ է գիտության հմտությունը»[9]:

Ընդհանուր ժողովից վերադառնալուց հետո Թորգոմը որսորդ Գևորգի հետ կազմում է «Որսկան» անունով 61 հոգիանոց մի նոր խումբ՝ երկիր անցնելու: Բայց այս խումբը չունեցավ «Մրրիկի» հաջողությունը: Սասունն արդեն պարտվել էր: Թորգոմը մտածում էր՝ հարձակվելով թուրքական սահմանի վրա, նրանց զորքերի մի մասը կքաշի դեպի սահմանը և կթեթևացնի Սասունի վիճակը: Խմբի կազմում էին մտավորականներ՝ ուսանող, բժիշկ, նույնիսկ հարուստ ընտանիքների զավակներ, որոնք, ամեն ինչ թողած, գնում էին Հայաստանի համար կռվելու: Օլթիի մոտ սահմանն անցնելու ժամանակ ռուս սահմանապահ զորքերը շրջապատում են նրանց դիրքերը և լուր տալիս թուրքական զորքերին: Ռուս սահմանապահների հրամանատար Բիկովը օգնության է շտապում թուրքերին, և «Որսկան» խումբն ընկնում է կրկնակի կրակի տակ: Թորգոմը հրամայում է ռուսների վրա գնդակ չարձակել, կռվել միայն թուրքերի դեմ, իսկ ինքը պատվիրակ է ուղարկում ռուս հրամանատարի մոտ՝ բացատրելու իրենց նպատակը: Ռուսները բանտարկում են իրար ետևից ուղարկված երկու պատվիրակի և շարունակում կռիվը: Հայերը ստիպված անձնատուր են լինում ռուսներին, բայց գնդակահարվում են, սպանվում է նաև Թորգոմը: Բիկովը հավաքում է 27 սպանվածների դիակները, նկարվում և արժանանում թուրք և ռուս հրամանատարության շնորհակալությանը: «Որսկան» զինատար խմբի կազմում զոհվում են բազմաթիվ նվիրյալ շուշեցիներ:

Թեմականի աշակերտներից Կարս էր անցել նաև Նիկոլ Պողոսյանը: Նրա ուսուցիչները Նիկոլին ներկայացնում էին իբրև բնածին տաղանդի, որը կարող էր դառնալ ցանկացած բնագավառի լավագույն մասնագետ: Չտանելով Շուշիի թեմական

[9] *Ռուբէն*, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1, Թեհրան, 1987, էջ 150:

կանի խիստ ռեժիմը՝ Նիկոլը մեկնում է Երևան, ընդունվում այնտեղի թեմականը, բայց այն էլ չավարտած՝ անցնում է Կարս: Այդտեղ իր համար ընտրելով Իշխան անունը՝ զինվորագրվում է Նևրուզի՝ երկիր անցնող «Շանթ» խմբին: Կարսից մտնելով թուրքական Բասեն, 1903 թ. սեպտեմբերի 18-ին արյունալի բախում են ունենում թուրքական Դալի-բաբա գյուղում տեղի զորքերի հետ[10]: Քչերին է հաջողվում փրկվել, դրանց թվում էր Նիկոլ-Իշխանը: Այդ անհաջողությունը չի ընկճում և չի վհատեցնում նրան, այլ ստիպում է խորհել արշավախմբային մարտավարության սխալ կամ ճիշտ լինելու հարցի շուրջ: Անդրկովկասից ռազմական ուժեր և ռազմամթերք անցկացնելու նպատակով ստեղծված հայդուկային արշավախմբերը տալիս էին բազմաթիվ զոհեր՝ չկատարելով իրենց առաջ դրված խնդիրները: Այդ պատճառով էլ ազգային կուսակցությունների ղեկավարները հանգում են այն համոզման, որ անհրաժեշտ է հրաժարվել արշավախմբեր ստեղծելուց, պետք է երկիր ուղարկել կարող և ունակ անհատ գործիչներ, ժողովրդին տեղում կազմակերպելու և նախապատրաստելու համար: Բայց կուսակցությունների մարտավարության փոփոխությունից առաջ նման եզրակացության էր հանգել հրաշքով փրկված Նիկոլ–Իշխանը, որին հաջողվեց անցնել երկիր: Վահան Փափազյանի հետ հասնելով Վասպուրական՝ Անցավ Ոշտունիք և մեծ գործունեություն ծավալեց ՀՅԴ-ի տեղական կազմակերպությունների հիմքերն ամրապնդելու համար: Նա երկար մնաց այդտեղ, վայելեց տեղի հայության սերն ու հարգանքը և իր մահկանացուն կնքեց 1915-ին՝ Վանի Ինքնապաշտպանական մարտերից առաջ, զոհ գնալով երիտթուրքերի խարդավանքներին:

Արդեն նշել ենք, որ Շուշիի թեմականի աշակերտներից էր նաև Սարգիս Հովհաննիսյանը՝ Սերգեյը, ապագա Արամ Մանուկյանը՝ 1915 թ. Վանի ինքնապաշտպանության ղեկա-

[10] *Հ. Սիմոնյան*, նշվ. աշխ., էջ 605:

վարներից մեկը, Վանի նահանգապետը, Սարդարապատի հերոսամարտի կազմակերպիչներից մեկը, Հայաստանի առաջին հանրապետության ներքին գործոց նախարարը, որի մասին գրվել են բազմաթիվ գրքեր:

Բազմաթիվ են շուշեցի նվիրյալ հայրենասերները: Բոլորի մասին խոսել հնարավոր չէ. ցանկանում եմ մի քանի խոսք ասել նրանցից մեկի՝ Կոստի Համբարձումյանի մասին, որն ի տարբերություն վերը նշվածների, ավարտել էր Շուշիի ռեալականը, Մոսկվայում և Գերմանիայում կատարելագործել գիտելիքները հոգեբանության բնագավառում, այնուհետև թողել ամեն ինչ, անցել Խոյ, հսկում էր Երկիր անցնող ուղիները, ճանապարհում խմբերը, հոգում նրանց հոգսերը: Ձեռներեց, չարքաշ, բոլոր պայմաններին հարմարվող այդ համեստ մարդը 1905-ին Պարսկաստանից անցել էր Անդրկովկաս և մեծ գործունեություն ծավալել հայ-թուրքական ընդհարումների ժամանակ: 1909 թ. Դաշնակցության դատի ընթացքում հանձն է առնում Ռուսաստանի ՀՅԴ կազմակերպությունների գոյությունը փրկելու գործը: 1914-ին նորից երկրում էր, Վասպուրականում, երբ Արամ Մանուկյանը թողնում է նահանգապետությունը, Կոստին փոխարինում է նրան: Մասնակցում և ղեկավարում է Պարսկաստանի կռիվները, սպանվում Սային-Կալայի մոտերքում՝ չտեսնելով իր երազած Հայաստանի անկախությունը, որի լուրը արդեն լսել էր: Առավել հետաքրքիրն այն էր, որ նրա եղբայրը հայտնի բոլշևիկ Սաքո (Սարգիս) Համբարձումյանն էր, որը կարևոր պաշտոններ է վարել նորաստեղծ Խորհրդային Հայաստանի հանրապետությունում, եղել է առողջապահության ժողկոմ, 1925–29 թթ.՝ ժողկոմխորհի նախագահ, հետագայում՝ ստալինյան բռնությունների զոհ[11]:

Շուշիի մի հետաքրքիր ընտանիք էր ցարական չինովնիկ Հարություն Բեկզադյանի ընտանիքը, որի 7 տղաները ստացել էին բարձրագույն կրթություն: Ավագը՝ Տիգրանը, դաշնակ-

[11] *Ռուբէն*, նշվ. աշխ., հ. 1, էջ 278:

ցության համակիր էր, Հայաստանի I հանրապետության դեսպանն էր Վրաստանում: Նրանից փոքրը՝ Հովսեփը, բժիշկ էր, էսէռական (սոցիալ-հեղափոխական) կուսակցության ակտիվ գործիչ: III որդին՝ Ալեքսանդրը, բոլշևիկ էր, Խորհրդային Հայաստանի կուսակցական և պետական գործիչ, ռազմհեղկոմի անդամ, Խորհրդային Միության դեսպան Հունգարիայում, անհատի պաշտամունքի զոհ: IV եղբայրը միապետական էր, կռվել է բոլշևիկների դեմ, խորհրդային իշխանության հաղթանակից հետո ապրել էր Հունաստանում, որի բանակում ծառայելով հասել էր գնդապետի աստիճանի: V եղբայրը դարձյալ սոցիալիստ-հեղափոխական էր, Անդրկովկասի էսէռների աչքի ընկնող գործիչներից: Մյուս երկու եղբայրները քաղաքական կյանքին չեն մասնակցել: Չնայած գաղափարական տարաձայնություններին՝ յոթ եղբայրները արտակարգ սիրով կապված էին իրար հետ[12]:

Չենք կարող թեկուզ հպանցիկ չխոսել հայ-թաթարական ընդհարումների ժամանակ դարձյալ շուշեցի նվիրյալների՝ Նիկոլ Դումանի և Վարդանի (Սարգիս Մեհրաբյանի) գործունեության մասին, որոնցից առաջինը ղեկավարում էր Երևանի հայության պաշտպանությունը, երկրորդը՝ Ղարաբաղի հայության պաշտպանության գործը:

Մենք հիմնականում ուշադրությունը բևեռեցինք թեմական դպրոցի սաների վրա: Բայց պակաս նշանավոր չէին նաև ռեալականի սաները: Ռուսական մշակույթի ազդեցության տակ նրանք համակվում են մարքսիստական գաղափարներով, ծառայում գիտական սոցիալիզմի գաղափարախոսությանը. Բոգդան և Լյուդվիգ Կնունյանցներ, Ալեքսանդր Բեկզադյան, Վլադիսլավ Կասպարով, Սարգիս Կասյան, մշակույթի, գիտության տարբեր բնագավառների բազում գործիչներ[13] և դրանց շարքում նշանավոր պատմաբան Աշոտ Հովհաննիս-

[12] *Հ. Սիմոնյան*, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, էջ 82–83:
[13] Տե՛ս *Հ. Գրիգորյան, Գ. Հարությունյան*, Շուշիի ռեալականը:

յանը, որի երկու փոքր, բայց տարողունակ հոդվածները արտակարգ պատկերացում են տալիս Շուշիի մտավորականության մասին: Ռեալականի մարքսիստ սաները իրենց հոգու խորքում մնացին իսկապես հայ, մեծատառով մարդ, և պատահական չէ, որ մինչև խորհրդային կարգերը ապրողները դարձան ստալինյան բռնությունների զոհ: Ես միանգամայն համաձայն եմ Բագրատ Ուլուբաբյանի հետ, որ այսօրվա հեռվից նայելով «Շուշիի թեմական դպրոցի գործունեությանը (ես կավելացնեի և ոչ միայն թեմականի), չես կարող հպարտությամբ չլցվել նրա համար, որ այնտեղ են գործել մեր ազգային մշակույթի փառավորված բազմաթիվ գործիչներ»[14]: Այդ ետնախորքի վրա պատահական չէր, որ Արցախյան շարժման օրերին արցախահայությանն օգնելու նպատակով ոտքի կանգնեց ողջ աշխարհում սփռված հայությունը: Դա հայ ոգու միասնության առհավատչյան էր և գիտակցումն այն հանգամանքի, որ Արցախի հարցի օրինավոր լուծումը սկիզբն էր հայ պահանջատիրության հետագա քայլերի:

---

[14] *Բ Ուլուբաբյան*, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Ե., 1994, էջ 196: